ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/99 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով տեսապրոյեկտորների (Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 06.11.2024թ. ժամը 15:30-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան /նախագահ/
Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան
Արման Երանոսյան
Ցոլակ Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Մելքոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/99** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/99** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ	info@alpha.am
2	Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ	zarehsafaryan@gmail.com
3	«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ	creative.business1920@gmail.com
4	«Աութսորս» ՍՊԸ	info@osllc.am
5	«Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ	hpartqaxaqaci@gmail.com
6	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	khv_84@mail.ru

7	«Ամազոն Իմպորտ» ՍՊԸ	amazonimportllc@gmail.com

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները													
		«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ		Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ		«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ		«Աութսորս» ՍՊԸ		«Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ		«Էյչ Գրուպ» ՍՊԸ		«Ամազոն Իմպորտ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ-ն	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ-ն	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ-ն	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ-ն	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ-ն	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ-ն	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ-ն	Ներառյալ ԱԱՀ-ն
1	21500000	13935200	16722240	14114350	16937220	15400000	18480000	21600000	25920000	22000000	26400000	22395833.34	26875000	25000000	25000000
2	10500000	8750000	10500000	803750	964500	8300000	9960000	10600000	12720000	11000000	13200000	8125000	9750000	25000000	25000000

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 311 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 12.11.2024 թ. ժամը 12:00-ին

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ**-ի հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է՝ բացակայում են երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի, ապրանքի տեղադրման ժամանակ իրականացվող համապատասխան ծրագրավորման, ինչպես նաև երաշխիքային սպասարկման ժամկետի վերաբերյալ հրավերով սահմանված պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.2 **Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ**-ի հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

6.2.1 Հավելված 1 դիմում-հայտարարությունում մասնակցության իրավունքի պահանջները լրացված են թերի, մասնավորապես՝ բացակայում են մասնակցի անվանումը, փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի վերաբերյալ պահանջը, ինչպես նաև գնման ընթացակարգի ծածկագիրը:

6.2.2 Բացակայում է 2-րդ չափաբաժնի համար տեխնիկական բնութագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ**-ին և **Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 և 6.2 կետերում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել մասնակիցների կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 2024թ. նոյեմբերի 14-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 14.11.2024 թ. ժամը 12:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում շտկել է 6.1-րդ կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

8.2 **Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ**-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել հանձնաժողովի կողմից սույն արձանագրության 6.2-րդ կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, **այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից **1-ին** չափաբաժի մասով ընտրված մասնակից ճանաչել **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.2 կետը՝ մերժել **Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ**-ի հայտը **2-րդ չափաբաժնի մասով՝** հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել.

- **Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ**-ի և **«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ**-ի հայտերը՝ **1-ին** չափաբաժնի մասով,
- **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ**-ի, **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ի և **«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ**-ի հայտերը՝ **2-րդ** չափաբաժնի մասով,

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9.4 **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ի հայտը՝ **1-րդ** չափաբաժնի մասով, **«Աութսորս» ՍՊԸ**-ի, **«Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ**-ի և **«Ամազոն Իմպորտ» ՍՊԸ**-ի հայտերը՝ **1-ին** և **2-րդ** չափաբաժինների մասով մերժվել են համակագի կողմից՝ գնային առաջարկները նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10.Գնահատման արդյունքների մասին

10.1 Հրապարակել 1-ին չափաբաժինի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել **Զարեհ Սաֆարյան Տիգրանի Ա/Ձ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_____ Անահիտ Հակոբյան

_____ Արման Երանոսյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Արսեն Մելքոնյան /քարտուղար/